

# “ՏԵՐ ՏՈՒՐ ԻՆՁ ԱՅՆ ՀՈԳԻՆ ՈՐՈՎ ՄԵՂԱԻՈՐԸ ՍԻՐԵՑԻՐ”

1. Մարմին եւ Հոգի
2. Հոգիով Սկսելով՝ Հիմա Մարմինով  
Կը Վերջացնէ՛ք
3. Նորայայտ Զողափակրթութեան  
Առասպելական Այլաբանական  
Նախակարծիքները
4. Աստուածային Տղացումը

**GIVE ME THAT SPIRIT BY WHICH  
YOU LOVED THE SINNERS**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ  
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
2009**

# ՄԱՐՄԻՆ ԵՒ ՀՈԳԻ

Մարդ արարած, իրեն շնորհուած աստուածային կերպարին և նմանութեան պատճառաւ, ի՛նք ալ դարձաւ տեսանելի և ստեղծագործող անկախ գոյութիւն և էութիւն: Աստուած կը կոչուի հօօր և հանճարեղ Արարիչ, որովհետեւ Ան կարողացած է Իր միտքն ու իմացականութիւնը հաղորդել մա՛րմնապէս: Անտեսանելի Հոգի Աստուած, Իր անչափելի իմաստութեամբ դարձած է տեսանելի Իր հրաշագործած տիեզերք համակարգով մարդ արարածին:

Ոհ, ի՞նչ հիասքանչ Արարիչ է Աստուած: Տիեզերք մը ուր 100 միլիար ծիր կաթիններ (galaxy), որոնց իւրաքանչիւր ծիր կաթինը կը պարունակէ աւելի քան 100 միլիար աստղ, որոնք կը յայտնացուցանեն ստեղծագործ գօրութիւնը անճառելի Արարիչին: Մարդ կ'ապրի հրաշագեղ տիեզերք գոյացութեան մը մէջ, ուր ի՛նք եւս հրաշալիք մըն է:

Տիեզերք համօրէն կը խորհրդանշէ հոգեւորը, իմացականը՝ Աստուած: «Աշխարհ» cosmos տիեզերք կը նշանակէ երկինքն ու երկիրը և բոլոր արարածները: Յարաբերական իմաստով կը նշանակէ նաեւ տիեզերքի կանոնը, որ կը հոգացուի Աստուծոյ հրամանաւ, և կը գտնուի Անոր մտքին ու ծրագրին մէջ--**Գող. Դ. 3, Կող. Բ. 8,20:** Աստուած ըսաւ. *«Թող Հոյս ըլլայ»:*

Տիեզերք լուսաւորուեցաւ: Չենք կրնար հաւատալ թէ մեր երկրի վրայ գոյութիւնը պատահական դիպուածի մը արդիւնքն է կամ ճակատագրի մը պատահարը: Մարդ արարածին գործօն մասնակցութիւնը իր գիտակցութեան պատճառաւ չափազանց մտերիմ ու սերտ է անհուն տիեզերքին հետ: Մարդկային սոյն իմացական կարողութիւնը համայն գոյացութեան մէջ, մեզ կը ստիպէ՝ որ մարդ էակը նպատակի համար ստեղծուած արարած մըն է, ու ոչ պատահականութեան մէկ կոյր ու ժամանակաւոր արտադրութիւն:

Նշանաւոր բնագէտներ կամ տիեզերաբաններ խորանալով իրենց մասնագիտութեան մէջ, սքանչացած են տիեզերքի հրաշալի կարգաւորութեամբ, խորհրդաւորութեամբ, գեղեցկութեամբ, մնալով աստուածապաշտ: Տիեզերքը հաղորդութիւն ու յարաբերութիւն է նկատելի նիւթերու և տարրերու և ո՛չ հաւաքածոյ թանգարանը ցուցադրելի գոյացութիւն մոլորակ առարկաներու: Մարդկային կենսագագացումը ինքնի՛ն տիեզերք մըն է, անպեղելի և անսահման: Տիեզերք մեռեալ տարր մը չէ, այլ կենսալից ու կենսալիր ներկայութիւնը Արարիչ Աստուծոյ: Տիեզերք Աստուծո՛յ կենսոլորտն է, ուր Անոր ներկայութիւնը ամէն տեղ է: Տիեզերքի և կեանքի վրայ նայելու չէ որպէս պատահականութիւն մը, այլ՝ Աստուծոյ էութեան և կենդանութեան յայտարարը: Տիեզերք իբրեւ արուեստ, ամենամեծ ապացոյցն է Արուեստագէտի գոյութեան:

Մարդու գոյութիւնը և պատմութիւնը պատահական և աննպատակ

իրողութիւններ չեն: Աստուած չէ այն որ մարդիկ ստեղծած էին Բարէ ու նիւթէ իրենց կերպարին կամ անասուններու նմանութեամբ: Ոչ ալ իմաստասէրներ ու գաղափարախօսներ տեսաբանած էին տիեզերքն ու կեանքը կարենալ բացատրելու համար գոյացութիւնը: Տիեզերքը, իր սահմանաւոր կատարելութեան մէջ իսկ, հատակոտոր խճանկար մը չէ՛, այլ հրաշալի կազմուածք մը, որ կը նշէ զԱստուած: Աստուծոյ վեհութիւնը տեսանելի դարձաւ երբ Ան նիւթական ստեղծագործութենէ դէպի հոգեմարմնաւոր՝ բուսական և կենդանակա՛ն արարչագործութեան սկսաւ:

Աստուած իշխանութիւն տուաւ ջուրին և հողին, որ արտադրեն աճող բուսականութիւն, անտառներ մայրիներու, պտղատու ծառեր, և գեղեցկատեսիլ ծաղիկներ: Նաեւ ձուկեր, թռչուններ, անասուններ և սողուններ: Աստուած տեսաւ որ բոլոր նիւթական եղող ստեղծուածները բարի են ու սիրելի Իրեն, սակայն այս բոլոր տիեզերական համակարգին մէջ չգտնուեցաւ գոյութիւն մը, որ Ձինքը սիրէ: Ուստի Ան մտածեց Իր հոգեկան կերպարին և նմանութեան, տալ նաեւ մարմնաւոր էակ մը որ ունենայ հոգի **(շունչ) -- անձնաւորութիւն:**

Գաղտնօրէն մօտենանք վեհագոյն Արարիչ Աստուծոյ և հաղորդուինք Անոր մտածումներուն և ծրագիրներուն: Անհուն միջոցին մէջ Ան կ'ըսէ Ինքնիրեն. «Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք, և ծովու ձուկերուն ու երկինքի թռչուններուն և անասուններուն ու բոլոր երկնի ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն թող իջիւն: ...եւ Տէր Աստուած գետնի հողէն ջինեց **(կերպաւորեց)** մարդը և անոր ոնգունքներուն կենդանութեան ջունչ փչեց ու մարդը կենդանի հոգի **(էութիւն, ինքնութիւն)** եղաւ», այսինքն անձնաւորութիւն, անձնաճանաչում ունեցաւ:

Բոլոր Աստուածաշունչ գրութիւններուն մէջ, "մարմին" բառը առաջին անգամ կ'իմանանք աստուածաշէն Ադամ մարդու հոգեկան արտայայտութենէն, ան իր եւս կնոջ տեսէն սփանչացած կը բացագանչէ.

**«Հիմա ասիկա ոսկորէս ոսկոր ու մարմինէս մարմին է, ասիկա կին կոչուի, Բանգի իր այրէն առնուեցաւ: Անոր համար այրը պիտի ձգէ իր հայրը ու իր մայրը, ու իր կնոջ պիտի յարի. ու մէկ մարմին պիտի ըլլան»**  
--ՄԵՆ. Բ. 23:

Մարդկային մարմինը հրաշարուեստ իսկութիւն մըն է, որ կը ջարժի և կը խօսի. սակայն Անհունին ծարաւն զգացող կարօտը ունի, որովհետեւ Բացարձակին հպումն ու Անոր ծունչէն կայծ մը ստացած է ան: Հետեւաբար Քրիստոսի մարմինն ու Արիւնը ճաշակողներու հոգիներուն մէջ կ'իջնէ Ինքն աստուածային ներկայութիւնը զօրացնելու և ներշնչելու ենթական-- **Յով. 2. 55-57:**

Ար. Հաղորդութեամբ հոգիներու միջեւ համազանգուած միութիւն մը կը ստեղծուի: Եկեղեցին ալ կոչուած է **"Յիսուսի Մարմին"ը**, ուստի ընդունինք նաեւ Յիսուսը սիրողները, որպէս Իր Մարմինը, և սիրո՛վ վարուինք իրարու հետ: Ակրտութիւնը մեզ Բրիստոսի մարմնակից և իրարու անդամակից կ'ընէ: Ար. Հաղորդութիւնը կ'աճեցնէ այս միութիւնը և կ'եղբայրացնէ: Աստուած մեզ Յիսուս Որդւոյն մէջ Իր որդիները կ'ընէ և կը մղէ հաւատացեալները նմանելու Բրիստոսի: Սուրբերու հաղորդութեամբ՝ հաւատացեալները կը մտնեն այն անհամար վկաներու երամին մէջ:

Հեթանոսներու արաբեալ Պօղոս կ'ըսէ. *«Եկեղեցին Բրիստոսի Մարմինն է, ամբողջացումն է Բրիստոսի, որ կ'ամբողջացնէ ամէն ինչ, ամէն տեղ»* -- **Եփես. Ա. 23**: Աստուած «Ամէն ինչ հնազանդեցուց Անոր **(Յիսուսի)** ոտներուն տակ ու հաստատեց զԱյն իբրեւ գլուխ եկեղեցիին բոլոր գործերուն վրայ, եկեղեցի՝ որ Անոր Մարմինն է, լրումը Անոր՝ որ կը լեցնէ ամէն բան ամէն բանի մէջ»: *«Ի շինութիւն Բրիստոսի մարմնին, մինչեւ որ մե՛նք ամէնքս հասնինք հաւատի մէկ միութեան և Աստուծոյ Որդիին Ճանաչումին, կատարեալ մարդու աստիճանին՝ Բրիստոսի կատարելութեան հասակին չափով»* -- **Եփես. Գ. 13**:

Մարդկային մարմինը արժեւորողը Աստուծոյ Հոգին է որ ջաղախած է մարդկային մարմինը: Աշխարհի բոլոր ոսկիներով չես կրնար գնել Ա. Գիրգոր Նարեկացի մը: Մարդկային մարմնին մէջ կան ո՛չ միայն պարզ տարրեր և բաղադրեալներ, այլեւ՝ ելեկտրականութիւն, մագնիսական ուժ, ուրիշ ուժեր, *զորս գիտնականներ տակաւին չե՛ն կրցած ճանչնալ*: Հրաշալի՛ք մըն է մարդկային մարմինը, և սակայն հո՛ղ էր ան, և պիտի դառնայ հողի: Հոգի՛ն է, Աստուծոյ շո՛ւնչն է՝ որ կ'արժեւորէ զայն: Մարդս միայն հացով չ'ապրիր, այլեւ, մանաւա՛նդ, վե՛հ խորհուրդներով: Եղիր սո՛ւրբ ով մարդ. միակ իրողութիւնը՝ որուն համար կ'արժէ ապրիլ: Որովհետեւ պիտի յառնես գերեզմանէն՝ մարմնով յաւերժապէս գեղեցիկ և պիտի յաւերժանաս հոգւո՛վդ:

Բրիստոնէութիւնը ձեւ ու մարմին, իմաստ ու հոգի՛ տուաւ հաւատքի պայքարին: Մարդու յոգնած մարմինը կազդոյր կը փնտռէ իսկ հոգին լոյս: Մարդ արարած մարմին և հոգի, սակայն իրապէս մէկ են: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է: "Հոգի" բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդհանուր անձնաւորութեան, "հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումը: Եկեղեցին Յարուցեալ Յիսուս Բրիստոսի նիւթեղէն մարմինն է: Մարդկային այս հողեղէն մարմինը իր գործունէութեամբ կ'ապշեցնէ գիտարուեստի մասնագէտները, որովհետեւ պատահականութեամբ չի կրնար շինուած ըլլալ: Պատահականութիւն և դիպում, մի միայն **ժխտակա՛ն** դեր կը կատարեն՝ կործանարար ու ո՛չ երբեք շինարար: Ինչպէս որ բանաւոր էակը իր մարմինով կը գործէ, այնպէս ալ Բրիստոս Իր Մարմինով՝ Եկեղեցիով կ'ուզէ

գործել:

Ինչ որ մարմնական է, *զգայի*: է, իսկ ինչ որ անմարմին՝ *իմանայի*: Եկեղեցույ առաքելութեան մէջ, հիմնական հարցը դաստիարակութիւնը ըլլալու է, այսինքն մարգել մարդը հոգեպէս, մտաւորապէս և մարմնապէս: «Յիսուս՝ Աստուծոյ մարմնացեալ ներկայութիւնն էր երկրի վրայ»: Մոյն պատճառաւ Ան ըսաւ.

### «Ա՛ն որ Զիս տեսաւ, Հա՛յրը տեսաւ»:

Մեզ տեսնողները մեր աւօրեայ գործունեութեան ջրջանին, զո՞վ կը տեսնեն արդեօք: Զրիստոսի մարմնանալովը՝ Աստուած մտաւ ուղղակի՝ մարդկային կեանքին մէջ: Յիսուսի՝ աշակերտիլ կը նշանակէ՝ հետեւի՛լ և ցոլացնել Անոր սիրոյ կեանքը: Աստուծոյ օգնութեամբ կրնանք անգամ մը եւս թարգմանել Յիսուսի խօսքը մեր ժամանակակից լեզուով, զայն մարմնացնելով մեր ներկայ կեանքին մէջ, որպէսզի Աետարանը կարենայ ապրիլ, և ապրելով, կարենայ ազատել այսօր, ինչպէս միշտ ազատած է "ես"ին ու մեղքին գերիները:

Պատմութեան մէջ Զրիստոսի մարմնացումն ու ներկայութիւնը Եկեղեցի՛ն ըլլալու է, ո՛չ թէ ճարտարապետական կառոյցը, այլ հաւատացեալներու միութիւնն ու միասնականութիւնը: Եկեղեցին մարմնացումը դառնալու է Յիսուսի սպասաւորութեան և ներողամտութեան: «Յիսուս Զրիստոս Ինքն է շօջափետլի մարմնացումը, երկնային վսեմութիւնը, անկոխելի սրբութիւնը, միակ ճշմարտութիւնը, անմրցելի բարութիւնը, անմատչելի բարձրութիւնը, կեանքի մեծ Լոյսին և աստուածային Օծութեան»: Զրիստոնեութեան մէջ իրապէս եղած են սրբակրօն և սրբակենցաղ ապրումի հիանալի մարմնացումներ, որոնք կեանքը ապրած են իր հոգեթով հմայքով և փառաշուք գերազանցութեամբ: Զրիստոսի մարդեղութիւնը, ֆիզիքական գոյութիւն տուաւ աստուածաստեղծ նկարագրին, որովհետեւ մարմինն ալ Աստուծոյ ձեռագործն է:

**"Հոգի"** բառը կը նշանակէ ու կը յայտնաբանէ այդ անտեսանելի գործօն զօրոյթը, որ կը շարժէ մարդկային ընկերային մշակութային, գաղափարական և քաղաքական ընթացքը, ըմբռնումը և կամեցողութիւնը: Մարդկութիւնը ունի իր հոգին, և այդ հոգին Աստուծոյ հետ իր ունեցած սուրբ հաղորդութիւնն ու աղօթքն է: Մարդ արարած մարմին և հոգի, սակայն իրապէս մէկ են: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է, "հոգի" բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդհանուր անձնաւորութեան: "Հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումները:

Հոգեկանը իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կ'իրագործուի բարձրագոյն մարդ էակներու մէջ: Մարդ բաղադրութիւնն է նիւթի և հոգիի, մահուան և յաւերժութեան: Կրօնքի հետաքրքրութեան առարկան մարդ-

կային հոգին է, անոր ներքին էութիւնը-- **Մատթ. ԺԶ. 26:** Արիստուտել և իրեն հետեւող յունական դպրոցներ Պիլթագորոսութիւնն իբրև պաշտօնական իմաստասիրութիւն անտես թողուցին, սակայն Պիլթագորեան գաղտնի ընկերութիւններ իրենց խորհուրդներով պահեցին այդ ըղձամբը, որ վերջ ի վերջոյ տոգորեց Հռոմէական աշխարհի խորհող և զգայուն հոգիները: Ան, որ կ'ուզէ նկարագրել Բարին, պէտք է գայն կրած ըլլայ իր հոգիին մէջ:

Արդարութիւնը արտացոլումն է տիեզերական Հոգիին: Մարդկային հոգին, ոչ պակաս մեծութեամբ, երկինք մըն է՝ մտնով, զգացումներով, երեւակայութեամբ և հոգեկան ապրումներով: Գրականութեան մէջ գաղափարականը՝ մարդկային հոգին է: Մարմինը կը կատարէ ա՛յն, ինչ որ հոգին կը պատուիրէ: Երբ մարմի՛նը տիրապետէ հոգիին, այդ մեղանչում է:

Երանի՛ հոգիով աղփատներուն՝ խոնարհներուն և իրենի՛ք զիրենի՛ք անըջան կարծողներուն, որովհետեւ անո՛նցն է երկնի արքայութիւնը: Մտնով ու հոգիով պատրաստ ըլլալ անձնանուիրումի: Մարդկային հոգւոյն համակարգութիւնը աւելի բարդ է քան տիեզերակա՛ն համակարգութիւնը:

Հոգեւոր կոչուած ամենավսեմ հարցերը թանձրացեալ չեն, շօշափելի և տեսանելի չեն, այլ *զգայի և իմանայի են* միայն հոգեկան կարողութեամբ: *Խորհուրդը* ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի է հոգեւոր աչքով՝ հաւատով: Արդեօք կարողացա՞ծ եմ իմ կեանքիս ընթացքին ծնունդ տալ իմ մէջ գտնուող բարոյական ու հոգեւոր սերմերուն, որոնք Աստուած սերմանած է հոգիիս մէջ: Իրողութիւն է որ մեր մէջ անմշակ մնացած է հոգեւոր գրականութեան անդաստանը: Եկեղեցին հոգեւոր կեանքի դպրոց մը ըլլալու է, Բարոզիչը պիտի ջանայ հոգեւոր դաստիարակութեան ուսուցման գաղտնիքին տիրանալ, և հոգիները առինձնելու, ներշնչելու և վերացնելու շնորհը ունենայ՝ իր նպատակին հասնելու համար: Մարդու հոգեւոր կոչումը իջիւն՛ է նիւթի և մարմնական ցանկութիւններուն վրայ:

Պօղոս առաքեալ կը գրէ Հռոմի Եկեղեցիին, ու կ'ըսէ.

*«Ե՛րաջեմ ձեզի, եղբայրներ, գթութեամբն Աստուծոյ, որ պատրաստէ՛ք ձեր մարմինները իբրեւ, կենդանի պատարագ, սուրբ և աստուածահաճոյ ա՛յդ է ձեր բանաւոր պաշտամունքը: Եւ այս աշխարհի կերպարանով մի՛ կերպարանաւորուիք, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ (հոգիով), որպէսզի Բննէ՛ք բարին և թէ՛ ի՛նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը»--Հռոմ. ԺԲ. 1-2:*

Երբ Աստուծոյ խօսքը *ապրումու* Բարոզուի, երբ եկեղեցւոյ խորհուրդները *իմաստաւորաւ* կատարուին, երբ ջարականները *հոգեթովօրէն* երգուին, ա՛յն ատեն ժողովուրդը պիտի կապուի Եկեղեցիին և իր ազգին ինքնութեան: *«Ճշմարիտ հոգեւորականին համար կայ մէկ բացակայ՝ ի՛նքը: Ինքը՝ որպէս սուկ անհաս իր անձնափակ դիմազօծով:*

*Այլապէս չէ հոգեւորական: Իր կոչումին անհաս ատարմութիւնը իր մահն է արդէն»--Գորեզին Ա. կաթողիկոս:*

Այժմ ազգերը և ժողովուրդները հարուստ են և հետզհետե՛ աւելի կը հարստանան ստացուածժով, դրամով և ջուայտութեամբ, բայց կողոպտուած ու դատարկուած են *հոգեւորացէս*, վարժով, կենցաղով ու սուրբ ապրումով: Երբ ցանկացող աչքերով աշխարհի ազգերուն նային, հոգեւորապէս կը մեղանչեն: Աստուծոյ պահանջները կը յառաջանան, օրինականէն դէպի բարոյականը, և բարոյականէն դէպի հոգեւորը: Տիեզերք համօրէն կը խորհրդանշէ հոգեւորը: Եկեղեցականներ սնանկացած էին և դարձած միայն ծիսապաշտ, կմախֆակերպ կրօն: Կրօնին խորհրդաւորութիւնն ու ներգործօն ուժը հեռացած էր պաշտամունքէն: Հոգեւորութիւնը այլամերժութեամբ ցուցադրուելու չէ, այլ Զրիստոսի սիրով:

Այժմ եկեղեցին պարտ է բարեկարգուիլ, հոգեփոխուիլ, և հոգեխառնուիլ Յարուցեալին ապրումին ու զոհողութեան ճոգիին հետ:

### **ՏԷՐ ՏՈՒՐ ԻՆՁ ԱՅՆ ՀՈԳԻՆ**

Տէր սուր ինձ այն հոգին  
Որով Հայր Աստուծոն հնազանդեցիր  
Տէր սուր ինձ այն հոգին  
Որով դէպի խաչ Դու գնացիր:  
Ես ինչպէս անեմ, որ բեզ նմանիմ  
Ով Յիսուս Զրիստոս իմ Տէր  
Սուրբ խօսքովդ մաքրիր իմ հոգին  
Ով Յիսուս Զրիստոս իմ Տէր:  
Տէր սուր ինձ այն հոգին  
Որով հոգիներ Դու ջահեցիր  
Տէր սուր ինձ այն հոգին  
Որով աշխարհի Դու յաղթեցիր:  
Տէր սուր ինձ այն հոգին  
Որով մեղաւորը սիրեցիր  
Տէր սուր ինձ այն հոգին  
Որով մարդկութեանը ներեցիր:  
Ուստի ամէն ինչ որ կամենում էմ  
Թէ ձեզ անեն մարդիկ  
Այնպէս ալ դուք առէ՛ք նրանց  
Այնպէս ալ դուք առէ՛ք նրանց:

**--3. Կիրակոսեան**

**Նոյեմբեր 4, 2004, Քորոնթօ**

## ՀՈԳԻՈՎ ՍԿՍԵԼՈՎ՝ ՀԻՄԱ ՄԱՐՄԻՆՈՎ ԿԸ ՎԵՐՋԱՑՆԷՔ

Տարբեր թարգմանութեան մէջ, սապէս կը կարդանք Պօղոս առաքեալին սոյն հարցումը: *«Մուրք Հոգիով նոր կեանք սկսելէ ետք, այժմ Որէնքի՛ն պահանջներո՞ւն կը վերադառնամ»--Գող. Գ. 3:*

Մարդ արարածին բարձրագոյն և խորագոյն յատկանիշը, եղած է անոր Գերբնականի և Գերիմանալիի զգացողութիւնը, գիտակցութիւնը և ճանաչումը: Մարդ արարածին հողայնութիւնը երբ ստացաւ Արարչին կենդանութեան ծունչը, նորաստեղծ *«մարդը եղաւ կենդանի հոգի»--Մնն. Բ. 7:*

Նորակառոյց և հողաշէն մարդ արարած, իր անչափահաս և դեռատի գիտակցութեամբ, իր բոլոր շրջանակը կը գնահատէր շօշափելով և տեսնելով: Ան ջանաց մօտենալ և մտերմանալ նաեւ Գերբնականին (Աստուծոյ) իր շօշափելի և տեսանելի հանգամանքով: Այս դէպք եղելութիւնն է, որ պատկերագրութեամբ կը ներկայացուի Մննդոց գրքին չորրորդ գլխուն մէջ երկու եղբայրներ կը փափափին շնորհակալութեան պաշտամունք կատարել իրենց Արարիչին: Երկու եղբայրներուն կրօնական պաշտամունքը և իրենց բերած րնծաները պատճառ կը դառնան նախանձի մրցակցութեան ու նաեւ ոճիրի:

Մարդ արարածին կրօնական պաշտամունքը, ի՛նչ ձեւով ալ կատարուի, ցարդ պատճառ եղած է թէ՛ ցեղային և թէ՛ մշակութային անհասկացողութեան և մարդկային եղեռնի: Ինչո՞ւ, որովհետեւ Գերբնական Արարիչը (Աստուած) բնական աչքի և մարմնական շօշափելիութեամբ չպաշտուիր: ***Մարդիկ մի՛շտ փափաքած են իրե՛նք*** ջինել և կերպարանք սալ Հոգեկանին և Գերիմանալիին:

Անցեալի հեթանոս ժողովուրդներ կանգնած էին ճարտարապետական հսկայ տաճարներ, խորաններ և կուռքեր, որոնց կը նուիրէին անասնական կամ մարդկային զոհեր, որոնցմով կը կարծէին հաճեցնել իրենց աստուածները: Կարծես թէ աստուածներ կարիքը ունէին մարդոց աւելցումներուն: Նոյնիսկ Հին Ռւխտի Աստուածը կը պաշտուէր ոչխարներու և ցուլերու արիւնով, որուն դէմ Հրեայ մարգարէն Եսայի կը համարձակի գրել և ըսել.--

*«Երկինք իմ պիտոս է, ու երկիր իմ ոտներուս պատուանդանն է. այս ի՞նչ տուն է որ ինձի համար կը ջինէք, և այս ի՞նչ տեղ է իմ հանգստութեանս համար, քանզի ասոնց ամէնը իմ ձեռքս ջինեց, ու ասոնք եղան, կ'ըսէ՛ Տէրը.*

*Բայց ես ասոր պիտի նայիմ, այսինքն՝ խոնարհին և կոտորած հոգի ու նեցողին ու իմ խօսմէս դողացողին.*

*Այնքան մոլորությունը մարդ մեռցնողի պէս է, գառնուկ զոհողը ջուր մոլորողի պէս, նուէր մատուցանողը խոզի արիւն մատուցանողի պէս, կնոյրուկ ծխողը կռոճ պաշտողի պէս, իրաւքընէ անուճ իրենց ճամբաները ընտրեցին, ու անուց հոգիները իրենց գարշելիներէն կ'ախորժին»--Եսայի ԿԶ. 1-3:*

Աստուած դրկեց բազմաթիւ մարգարէներ ու տեսանողներ թէ՛ Հրեայ ազգին և թէ համայն աշխարհի: Մակայն մարգարէներ ու տեսանողներ, իրենց ազգային մոլեռանդութեան և ծայրայեղութեան՝ նախապաշարումին պատճառաւ չհասկցան Աստուծոյ պատգամները: Իմ համեստ համոզումս է, որ Աստուած ո՛չ թէ ստեղծեց մարդը և թողուց զայն իր դեռատի վիճակին մէջ որ ան չափահաս դառնայ, այլ՝ Աստուած ցարդ կ'աշխատի ու զայն լրումի՛ կը ջանայ հասցնել Իր սիրած մարդ արարածը: Ի՞նչ յուզիչ բառերով գրած է Յովհաննէս Աւետարանիչ և սրտածմլիկ Բաղրութեամբ կ'ըսէ մեզի.

***«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»***

Աստուածային սոյն յայտնութեան մէջ իսկ նախապաշարում չունեցողներ, կ'ըմբռնեն թէ Աստուած պաշտել ի՞նչ կը նշանակէ: Աստուած ո՛չ սրբատեղի (տաճար, եկեղեցի) կը փնտռէ տեսնել, որովհետեւ Անոր Իսկութիւնը՝ Սրբութիւնն է: Ինչպէս Եսայի մարգարէն ըսած է, Աստուած, մարդուն մէջ տեսնել կ'ուզէ խոնարհութիւն, սրբութիւն, հաւատք և սէր: Տէր Յիսուս երբ ուզեց յայտնել ու ճանչցնել Հա՛յր Աստուածը, ըսաւ Սամարուհիին.

***«Մէջ այս լերան վրայ և ո՛չ ալ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընեն Հօրը: ... Եջմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով և Եջմարտութեամբ, քանի որ Հայրն ալ այդպիսի երկրպագողներ կ'ուզէ Իրեն: Հոգի է Աստուած, և Անոր երկրպագողները պէ՛տք է հոգիով և Եջմարտութեամբ երկրպագութիւն ընեն»--Յով. Դ. 23-26:***

Յիսուս որոջ և հասկնալի կերպով կը բացատրէ Սամարուհիին թէ Աստուած ինչպէ՛ս կը պաշտուի, և ո՞ւր կը գտնուի Ան: Ինչպէս որ օդ, ջուրն և հով ըսուած անտեսանելիները ամէն տեղ են, նոյնպէս ալ Աստուած ամէն տեղ է Հոգիով: Մանաւանդ, Իր Միածին Որդիով մեզի պատուիրած է ըսելով,

թէ երբ աղօթենք, մտնենք մեր սենեակը, փակենք դուռը և աղօթենք Իրեն գաղտնօրէն, որովհետեւ մեր գաղտնի աղօթքն ու խնդրուածքը Ան հրապարակաւ պիտի վարձատրէ: Աստուած այնքա՛ն կը սիրէ և կ'ուզէ մտերմանալ մեզի հետ, որ Ինքզինք մատչելի և մերձեանալի ըրած է մարդկութեան Իր Մարդեղացեալ Յիսուս Որդիովը: Սոյն մտերմութիւնը կը տեսնենք երբ Յիսուս, Իր գլխարտութեան պատճառաւ կ'ըսէ անդամալոյծին որ տարիֆով իրմէ աւելի մեծ էր. **«Որդեա՛կ, բու մեղքերդ ներուած են բեզի»,** գայթակղեցնելով ներկայ եղող կրօնաւորները--**Մարկ. Բ. 5:**

Հօր Աստուծոյ որկած Պատգամաւոր Մարդեղացեալը, մտերմօրէն կը յայտնէ Արարիչ Աստուծոյ սէրը համա՛յն մարդկութեան, ըսելով.

**«Մարդու Որդին եկաւ փնտռելու և փրկելու կորսուածը»:**

Մարդեղացեալ Յիսուս եկաւ աշխարհ գտնելու կորսուած մարդկութիւնը և վերադարձնելու զայն Աստուծոյ, որ Իր Կերպարն ու Նմանութիւնը պիտի ունենար: Մարդեղացեալ Յիսուսի առաքելութիւնը միայն թողութիւն և ներում շնորհել չէր մարդկութեան, այլ նաեւ Հօր Աստուծոյ սիրած մարդ արարածը գտնե՛լ ու վերադարձնե՛լ էր իր Արարչին: Ուստի Յիսուս սոյն Գերբնական և գերզգայուն կատարումին համար, նուիրեց Իր անձը, ո՛չ որպէս զոհ որպէս *Բաւոթիւն*, այլ վկայութիւն մը մարդկութեան, թէ Աստուած զիրենք կը սիրէ Իր ամբողջ եութեամբը: Յիսուսի սրբարար Խաչելութիւնը, վկայութիւն մըն էր Աստուծոյ սիրոյն, ու ո՛չ երբեք զոհագործութիւն մը, որպէս Բաւոթիւն:

\*\*\*\*\*

Հետեւաբար Պօղոս առաքեալի «Սուրբ Հոգիով նոր կեանք սկսելէ ետք այժմ *Օրէնքի՛ն պահանջներո՛ւն կը վերադառնամ.*» զարմանքը որքան հասկընալի կը դառնայ: Մարդ արարած, թէ հեթանոս և թէ միաստուածեան Հրեան, իր պաշտամունքն ու երկրպագութիւնը առ Աստուած, ըրած էր մարմնակա՛ն ու տեսանելի տաճարներու (եկեղեցիներու) կառոյցին մէջ և անոնց խորան- ներուն առջեւ: Աստուծոյ Պատգամաւոր Մարդեղեա՛լն էր որ ըսաւ. **«Օրէնքը և մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէ՛ս ի զօրու էին. Անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւտարանուի»**--**Ղուկ. ԺԶ. 16:**

Պօղոս առաքեալ ստացաւ յատուկ պատուիրակութիւն Բարոզելու Յիսուս Զրիստոսի Աւետարանը (պատգամը) համայն մարդկութեան: Ան Բաջաբար ու հերոսաբար կը վկայէ Ագրիպպաս արքային իր տեսիլքն ու պատուիրակութիւնը, ըսելով.

*Տէրը ըսաւ. «Ելի՛ր և կայնէ՛ր ոտներուդ վրայ. էս բեզի երեւցայ անոր*

համար որ Բեզ դարձ նեմ պաշտօնեայ և վկայ այն բաներուն, որոնց մէջ տեսար Ջիւ, նաեւ այն բաներուն, որոնցմով պիտի երեւնաւ Բեզի՝ փրկելու համար Բեզ այն ժողովուրդէն և հեթանոսներէն, որոնց պիտի դրկեալ Բեզ, որ բանաս անոնց աչքերը, խաւարէն լոյսին դարձ նեւ զանոնք և Աստուանցի իշխանութենէն՝ Աստուծոյ, որպէսզի անոնք մեղքերու թողութիւն ստանան և սուրբերու հետ ժառանգութեան բաժին՝ ինծի հանդէպ ու նեցած իրենց հաւատով:

Աստի ո՛վ Ազրիպպաս արքայ, ես անհնազանդ չգտնուեցայ այդ երկնային տեսիլքին, այլ նախ քոչոր անոնց, որ Բամակոսի ու երուսաղէմի մէջ էին և Հրէաստանի քոչոր գաւառներուն մէջ, ապա նաեւ հեթանոսներուն Բարոզեցի որ զոջան ու դառնան կենդանի Աստուծոյն և ապաշխարութեան արժանի գոյթեր կատարեն:--**Գործք ԻԶ. 15-20:**

Կրօնքը, մարդու բնութեան, էութեան մէջ իսկ շաղուած երեւոյթ մըն է: Մարդիկ ցարդ Զրիստոսի պատգամին (կրօնին) անհաղորդ են, ու հին հաւատալիքներու գերին: Ոմանց Բով կրօնական ամուր հաւատքը շէնքի ու խորանի (երեւելի ու ջօջափելի առարկաներու) կը վերածուի և ոմանց Բով ալ հոգեկան կեանքի ու նուիրումի: Այս է պատճառը որ կրօնական կամ բարոյական դրութեան մը հետեւողներ բունագբօսած և խանգարած են յաճախ անոր Հիմնադրին՝ Յիսուսի բուն Ոգին, որովհետեւ ունեցած են նախանձա-յուզութիւն միայն՝ առանց անոր առարկայական ճշգրիտ գիտակցութեանը: Զրիստոսի Մարդեղութիւնը յեղաշրջեց մարդկութեան կրօնական ըմբռնումը և տիեզերքի աշխարհայեցողութիւնը:

"Հոգեկան և Մարմնական" բառերը, ոչ միայն եկեղեցիներու և տաճարներու խորաններուն կ'ակնարկէ, այլ նաեւ մարմնական թլփատութեան և անթլփատութեան եւս, որովհետեւ մարդկային մարմինն ալ Աստուծոյ տաճար կը սեպուի: Յիսուս, Սիւբարի ջրհորին Բով Իր իւրայատուկ խօսակցութեամբ երբ յայտնաբանեց Հայր Աստուծոյ հօգօր հոգեկանութիւնը, Մամարուհին փոխանակ զայթակդելու իր կրօնական համոզումներուն մէջ, իր գիտակցական հորիզոնը ընդարձակուեցաւ: Ան փոխանակ զրպարտելու Հրեայ մարգարէն Մամարացի Բահաններուն, հրաւիրեց իր ազգակիցները որ գան և իմանան այս նոր Մարգարէին աստուածախօս յայտնութիւնները:

Որպէս Զրիստոնեայ եկեղեցականներ, մեզմէ Բանիներ կրցած են տեսնել Աւետարանին ճշմարտութիւնները, և վկայած մեր բարեկամներուն: Զանիներ կը սերտեն Յիսուսի Աւետարանները: Մակայն քոչոր Հայերը կը պարծենան Հինգերորդ Բարուն կատարուած Աստուածաշունչի Թարգմանութեան: Արդեօք ինչո՞ւ Թարգմանուեցաւ Աստուածաշունչ Մատեանը Հայերէնի: Գրադարանները զարդարելու համար: Որպէս Ֆէթիշ, բարձերու տա՞կ դրուելու համար, թէ սերտելու և ուսումնասիրելու համար:

Ժամանած ենք այնպիսի հանգրուան մը, ուր պարտ ենք որոշել մեր ընտրութիւնը: Որովհետեւ երկար դարերու և անտարբեր ու անբարեխիղճ եպիսկոպոսներու պատճառաւ, բոլոր՝ եկեղեցիներն ալ ջեղեցան դէպի ժխտական ուղղութիւն: Բաղաճական ուժերու օժանդակութեամբը կարգ մը եկեղեցիներ ենթարկուեցան հաւատաճնական արջաւներու: Եւրոպայի եկեղեցական շաւտաճնութիւնը որ սկսաւ որպէս *հալածանք* հերետիկոսներու դէմ 1184-ին, դարձաւ արիւնալի և անողոք սպանդ ու ոճիր և վերջ գտաւ 1820-ին:

Այս երկար դարերու ընթացքին բազմաթիւ հեթանոսական ծեսեր և ո՛չ աւետարանական հաւատալիքներ սարդեցան ու դարձան "եկեղեցական" վարդապետութիւններ: Օրինակ. "եկեղեցի" բառը, որ ըստ Յիսուս Բրիստոսի բացատրութեան կը նշանակէր սուրբերու և հաւատացեալներու հաւաք ու միասնականութիւն, սկսաւ գործածուիլ հեթանոս տաճարներու քարաշէն ու մարմարաշէն ճարտարապետական կառոյցներու համար: Մոյն ճարտարապետական կառոյցներու խորանները եւս ստացան սրբութիւն և դարձան անմերձեանալի մոմալոյսերու կեդրոն մը:

Մարդեղացեալ Յիսուս Իր աստուածառաք պատգամով ըսաւ.

*«Երբ աղօթելու ըլլաս՝ մտի՛ր սենեակդ, փակէ՛ դուռդ և ծածո՛ւնց աղօթէ՛ քու Հօրդ. և քու Հայրդ, որ կը տեսնէ ծածկապէս, պիտի հատուցանէ քեզի յայտնապէս.»--Մատթ. 2. 6:*

Ըսան դարերու ջրջանին, Բրիստոնեայ կարծուած ազգերու ըրածը հար և նման չրեայ ազգին ըրածներէն չի տարբերիր: Մովսէս մարգարէին խորան տաճարը ուր ոչխարներ և արջաւներ կը զոհագործուէին, բնաւ տարբերութիւն մը չուներին հեթանոս աստուածներու զոհագործութենէն: չրեաներուն զոհագործութիւնը հաճեցնել էր Եհովա Աստուածը, իսկ չեթանոսներուն զոհագործութիւնը հաճեցնել էր բազմաթիւ աստուածներ: Միթէ Աստուած ճշմարիտը, կենդանիներու արեա՞մբ կը կաշառուի... : Մովսէսէ Յ հարիւր տարի յետոյ Եսայի մարգարէ կը նգովէ Մովսէսի պատուիրած անասուններու զոհագործութիւնը. կարդալ **Եսայի 66-րդ** գլուխը:

Մասնակցի՛նք Տէր Յիսուսի և Մամարացի կնոջ խորհրդապաշտ երկկողմանի խօսակցութեան, որ արձանագրած է Յովհաննէս առաքեալ իր Աւետարանին չորրորդ գլխուն մէջ: Յիսուսի արտայայտած իրողութիւնները այնքա՛ն աննախընթաց և բուռն են, որ եթէ պատմէր չրեաներուն, Չինք անմիջապէս պիտի քարկոծէին: Յիսուս ըսաւ Մամարուհիին.

*«Մ՛վ կիս, հաւատա՛ ինձի, որ պիտի գայ ծածանակ, երբ ո՛չ այս լերան վրայ եւ ո՛չ ալ Երուսաղէմի մէջ երկրազազութիւն պիտի ընեն Հօրը: ... Բայց պիտի գայ*

*Ժամանակ, և արդէն եկած է, երբ ճշմարիտ  
երկրագողները երկրագութիւն պիտի ընեն Հօրը՝  
հոգիով և ճշմարտութեամբ, քանի որ Հայրն ալ  
այդպիսի երկրագողներ կ'ուզէ Իրեն: Հոգի է  
Աստուած, և Անոր երկրագողները պէտք է հոգիով և  
ճշմարտութեամբ երկրագութիւն ընեն»--Ղ-23-26:*

Առաքելական շրջանին, եկեղեցին, հաւատացեալներու և աղօթողներու հաւաքն էր: Այդ սիրոյ և ընկերային շնորհը վայելելու համար հաւատացեալներ անկեղծ սիրով կը հաւաքուէին իրարու մօտ: Սակայն աւաղ որ ներկայիս այդ սուրբ հաւաքը կրկին դարձաւ քար ու մարմար, խորան և տաճար: Փորձենք տեսնել թէ աստուածապատգամ Յիսուս ի՞նչ կ'ըսէ քարաշէն ու մարմարաշէն տաճար եկեղեցիներուն:

Երբ Յիսուս տաճարէն դուրս կ'ելլէր՝ Իր աշակերտներէն մէկը ըսաւ Անոր. «Վարդապետ, տես ինչպիսի՜ քարեր են ասոնք, և ինչպիսի՜ շինուածք»: Յիսուս պատասխանեց անոր և ըսաւ.

*«Կը տեսնե՞ս այդ բոլոր շինուածքները.  
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ քառնցմէ քար քարի  
վրայ պիտի չմնայ որ չճանաչուի»--Մարկոս ԺԳ. 1-2:*

Եւ երբ ոմանք տաճարի մասին կ'ըսէին թէ՛ գեղեցիկ քարերով ու աշտարակներով է զարդարուած, Յիսուս ըսաւ.

*«Այդ բոլորը զոր կը տեսնէ՛ք, օրեր պիտի գան, երբ  
այնտեղ քար քարի վրայ պիտի չմնայ որ չճանաչուի»  
--Ղուկ. ԻԱ. 5-6:*

Յիսուս, Իր սիրած Աստուծոյ տունը (տաճարը), որ շանաց մաքրել անսուրբ կղերականներէ և դրամապաշտ տաճարականներէ, ինչո՞ւ կը նախաձայնէ անոր աւերումն ու կործանումը: Որովհետեւ քարն ու ճարտարապետութիւնը չե՛ն որ կը սրբացանեն Աստուծոյ տան (եկեղեցւոյ) մը իսկութիւնը և ճշմարիտ բնոյթը, այլ՝ Աստուծոյ սուրբ սիրոյ

*ներկայութիւնը:*

Օրինակ, իրար սիրող, և իրարու ներկայութիւնը փնտրող զոյգեր իրարու ծառայող անձեր, օր մըն ալ դատաւորի մը ներկայութեան իրարմէ կը բաժնուին, որովհետեւ չեն կրնար նոյնիսկ իրարու նայուածքը դիտել: Ինչո՞ւ, անցեալի սիրոյ նայուածքը ներկայիս իրենց զգուանք կը պատճառէ: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ իրենց նախկին սերը, մի միայն մարմնական էր, անձնասէ՛ր էր, փոխանակ ըլլալու անձնանուէր և անձնագրի: Ծօշափելի և տեսանելի սէ՛ր մըն էր:

Նոյնպէս ալ, երբ զԱստուած սիրելը, Անոր նուիրուիլը, Անոր վստահիլը, հոգեկանէ նիւթականի՛ (քարի և ճարտարապետական կառոյցի) վերածուին

միայն, Աստուած և Անոր Իսկութիւնը և Սրբութիւնը, ինքնին կը հեռանան սուրբ կարծուած իսկութենէն, որ միայն քար ու ճարտարապետութիւն են: Ուրիշ խօսքով մեհեան կը դառնան:

Հրեայ ազգը որ ծայրայեղօրէն աստուածապաշտ կը կարծուէր ըլլալ, իրականութեան մէջ կը պաշտէր ինքզինք, ի՛ր հարստութիւնը և իր ինքնախաբէութիւնը: Մարդեղացեալ Աստուծոյ Որդին ըսաւ հրեայ ազգին.

***«Վա՛յ ձեզի՝ դպիրներուդ և կեղծաւոր Փարիսեցիներուդ, որ ծով ու ցամաք կը ջրջի՛ք մէկ հատիկ նորադարձ ջահելու համար, և երբ գանձէ՛ ձեզմէ՛ կրկնապատիկ աւելի գէհե՛նի որդի կը դարձնէ՛ գայն»*** --Մատթ. ԻԳ. 15:

Որքա՛ն ճշմարիտ են Քրիստոսի խօսքերը որոնք կը համեմատին նաեւ այսօր: Զայրոնիստները, որոնք խաբեքայութեամբ և զէնքով գրաւեցին Պաղեստինը Արաբներէն, կայնած իրենց կրօնական տարազով, կործանած Երուսաղէմ տաճարի պարիսպին դիմաց, կ'աղօթեն *«Ետացածի՛ն*, Աստուծոյ մը, որ օգնէ զիրենք, ոչնչացնելու համար Արաբ Պաղեստինցիները: Հրեայ մեծամեծներ, ոչ միայն սեփականացուցած ըլլալ կը կարծեն Պաղեստին երկիրը, այլ նաեւ զԱստուած... : Աստուած ողորմի չայ ազգին, որ մենք եւս չփոխանակենք Աստուծոյ սրբարար ներկայութիւնը, նիւթեղէն քարի և ճարտարապետութեան մը հետ: Որպէս աշակերտ Քրիստոսի պատուէրներուն, ունենանք իմաստութիւնը գանազանելու Աստուծոյ Սուրբ ներկայութիւնը մարմնաւոր քարէն ու ճարտարապետական կառուցուածքներէն:

Ի՞նչ կը կարծէ՛ք թէ Աստուած կը խնդրէ իր սիրած մարդ արարածէն: Դրամակա՞ն նուիրատուութիւն, ճգնաւորութի՞ւն կամ նահատակութի՞ւն, ո՛չ, Յիսուս այդ հարցումը շատ պատշաճօրէն ըրաւ Իր Պետրոս աշակերտին: Այսօր եւս Ան կը հարցնէ մեզմէ՛ իւրաքանչիւրին.

**«Սիմո՛ն Յովնանի, կը սիրե՞ս Զիս»:**

**Յունիս 25, 2003**

**Թորոնթօ**

# ՆՈՐԱՅԱՅՏ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Աշխարհ կը թաւալի և մարդկային ֆաղափակրթութիւնը յամբօրէն կ'ընթանայ: Պատմութեան բնականոն ընթացքը, դէպքերու հոլովոյթը և կեանքի վտեմ ընթացքը, արդեօք, վերջին 50 տարիներու յարափոփոխ ծաւալումով դէպի ո՞ւր կը թեփի:

Հակառակ բազմապիսի ու զանազան հեռատեսիլի ֆարոգչութիւններու և բազմաթիւ նոր եկեղեցակառոյցներու, մարդիկ դարձած են անհաւատ, ամբարիջտ ցոփակեաց, անձնակեդրոն, ազահ, նիւթապաշտ և գիտապաշտ: Որքան ալ ջանանք ուրանալ կամ անտեսել սոյն տխուր ճշմարտութիւնները, անոնք բացորոշ և ցաւալի իրականութիւններ և իրողութիւններ ըլլալէ չեն դադրիր:

Ներկայ մարդկութիւնը կը թուի ըլլալ հաւատացեալ, սակայն ինչի՞ կը հաւատայ: Ներկայ ֆաղափակրթեալ մարդը կը ջանայ վերադառնալ բնութեան, բնականին ու *բիրտ* իրականութեան, որովհետեւ ան կորսուած է մոռյաշուք կեանքի և շփոթ իրականութիւններու յորձանուտին մէջ: Ան դարձած է երկրպագուն և հաւատաւորը հազիւ ծանցուած և *էրեցած* գիտութեան և մարդկային ուսուցման: Եթէ *հաւատն'չ* պիտի ընթանայ ֆաղափակրթութիւնը, ինչո՞ւ չ'ընդունիլ և չհաւատալ իրականութիւններու և իրողութիւններու, որոնք գիտութեան հասողութենէն դուրս և մեր ըմբռնելու կարողութենէն անդին են:

Քաղաքակրթութիւնը միշտ պարտադրած է ինքզինքը և նիւթը բիրտ դէպքերու իրականութեամբ (համաշխարհային երկրորդ Պատերազմը): Նորայայտ ֆաղափակրթութիւնը աւելի դիւրին է նկարագրել, քան թէ ըմբռնել, որովհետեւ նիւթապաշտ, գիտապաշտ հաւատալիքը՝ ո՛չ դաւանական կրօնք է և ոչ ալ յայտագրուած ու կանոնագրուած ֆաղափականութիւն, այլ զօրաւորին կամայականութիւնը:

Նորայայտ ֆաղափակրթեալ Արեւմուտքին ուրացած է իր պապենական Զրիստոնէական հաւատքը և կը խորխորէ հեթանոս յստակատեսական (clairvoyance), բիւրեղահմայութեան և վերամարմնացումի խառնաշփոթ ու մթազնող խաւարի անկերպարան լաբիւրինթոսին մէջ: Մթութեան և հոգեկան խաւարին մէջ, իրերու իսկութիւնը չ'երեւիր. չենք կրնար ճշդել անոնց գեղեցկութիւնը կամ տգեղութիւնը, օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը: Խաւարը գիշատիչ և մահաբար կենդանիներու գործելու անցանկալի ժամն ու աննախատեսելի պահն է: Նորայայտ ֆաղափակրթեալը չ'ուզէր իր գաղափարականը կրօնք կամ գիտութեան դաւանանք համարել, որպէսզի

ինձզինձ նուստ չ՛գգայ որպէս գիտարուեստի հաւատաւոր մը: Սակայն Արեւմուտքի սիրաբանութիւնը նիւթապաշտութեան և մարմնապաշտութեան հետ *անձ նատուածութեան*, հաւատալիք մը դարձած է ինձնին: Ինչպէս Փարիսեցիք հիացան Յիսուսի, սակայն իրենց սրտին մէջ ասեցին Ձինձ, նոյնպէս ալ նոր սերունդը չ՛ուզէր խոնարհիլ գերագոյն ճշմարտութեան՝ Աստուծոյ առջեւ, որ Իրականութիւնն է բոլոր ժամանակներուն համար:

Անցեալին՝ Քրիստոնեայ աւետարանիչներ կ՛ուղղուէին Արեւելք աւետելու համար մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լոյս հաւատքը և փրկութիւնը: Մինչ այսօր, Արեւմտեան գիտարուեստի ջատագովներ՝ իրե՛նք կ՛երթան Արեւելք, փնտռելու և հետազօտելու կեանքի իմաստը, բարիքը, երջանկութիւնը և ներքին հոգեկան խաղաղութիւնը: Այս նորելուկ "իմաստասեր" և "հոգեբան" կրչուող ուսումնասէրները, փոխանակ սերտելու իրենց պապեանական սուրբ հաւատքը, կը խարխափին գտնելու իրենց մտատիպարը (ինձզինձնին) Հնդկական հազար ու մէկ հաւատալիքներու՝ Պուտտայական անձնակորուստի և Իսլամական Սուֆիզմի մէջ: Մասամբ ներելի է այս նորայայտ սերունդին ընթացքը, որովհետեւ Քրիստոսի իրականութիւնը և ճշմարտութիւնը մնացած են գաճաճ հոգիներով աշխարհականացած հոգեւորականներու ձեռքը:

Ներկայիս աշխարհ և եկեղեցին կը գտնուին իրենց գոյամարտի վերջին կեդրոնացման վայրը, թերեւս ամենէն ճակատագրական հանգրուանին առջեւ: Եկեղեցւոյ աշխարհականացած կենսադրոտը, յաճախ, կը գայթակղեցնէ անկեղծ հաւատացեալները և կը վանէ զանոնք օտար մակադատելիներ: Եկեղեցին, թէեւ, հոգեւոր հայրենիքն է բոլոր հաւատացեալներուն, սակայն ան *անհաղորդ* մնացած է նոր սերունդի հոգեկան պահանջներուն և ապրումներուն:

Երկու մտքի վրայ կաղացող գիտնականներ՝ իրենք եւս չեն կրնար համոզում գոյացնել թէ *մե՛ենական* մօտեցումով կարելի է լուծել աշխարհի բարդացած հարցերը: Կարգ մը արուեստագէտներ և գիտնականներ կ՛անդրադառնան, թէ աշխարհի տագնապը հոգեկա՛ն ճգնաժամ և խռովք է ու ո՛չ նիւթական ու քաղաքական:

Թէեւ ջնջուած է կրօնքը շատ մը իմաստասէրներու, արուեստագէտներու և գիտնականներու համար, սակայն գերբնական և հոգեկա՛ն լուծումի աշխատանքները չեն դադրած: Նորայայտ գիտնականները կը ջանան *միտոլոգ* ըմբռնել հոգեկանը, մինչ հաւատալու համար միայն միտք չի բաւեր, այլ՝ երանական լոյսին տեսութիւնն ալ (հաւատք) հարկաւոր է: Մարդ արարածը եթէ հաւատալէ ալ դադրի, *հաւատացեալ* մը ըլլալէ չի դադրիր...: Կարելի է անհատապէս և ազատօրէն հաւատալ, սակայն այս հաւատալը անկախօրէն չգործադրուիր: Հաւատալու ազատ իրագործումը որ կը կարծուի բոպէական ըլլալ, իրականութեան մէջ պատմական է ու կու գայ դարաւոր անցեալէն:

Չորրորդ դարէն ի վեր, հայ մարդու գիտակցական և ենթագիտակցական կացութիւնը կազմող մեծագոյն ազդակը եղած է իր *հաւատքը*

Քրիստոնեութիւնը: Այս հաւատքին ներշնչումը թէ՛ յաւերժացուցած է Հայ ազգը և թէ ջնորհած է մեզի հաւատակերտ Սուրբ Էջմիածին որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժանիքները՝ սէր, անձնուրացութիւն և գոհաբերութիւն:

Ուստի դիմե՛նք այսօր, որպէս նոր սերունդ, դէպի

***Կեանք, Ըջմարտութիւն և Սիրո՛յ Ծամբան,***

դէպի լոյս առաւօտ *հաւատքո՛ւյ* և լաւատեսութեամբ: Մեր Տէրը և Փրփչը ըսաւ.

**«Ինծի՛ եկէ՛ք դուք բոլորդ, յոգնածներ և բեռնաւորուածներ,  
և Ե՛ս հանգիստ պիտի տամ ձեզի»:**

**Յունիս 22, 1992**

**Քորոնթօ**

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅՈՒԱՅՈՒՄԸ

Մարդկային տեսողութիւնը, միլիոնաւոր լոյսի մղոններ հեռուները կը տեսնէ և աստղերն ու մոլորակները կը բննէ: Արուեստական արբանեակներու միջոցաւ, ան երկրագունտը կը չափէ ու երթեւեկող ինքնաշարժները կը դիտէ: Այս հիասքանչ և հզօր աչքը սակայն չի կրնար տեսնել ինքզինք...բացի հայելիի ցոլացումի մէջէն:

Աչքե՛ր որոնք ենթակային լո՛յսն են, աչքե՛ր որոնք գեղեցիկի՞ն կը ցանկան, աչքե՛ր որոնցմով մարդիկ երդում կ'ընեն: Աչքե՛ր որոնք մանրադէտին ընդմէջէն հիւլէն կը գննեն, անկարող են դիտել և տեսնել իրենք զիրենք առանց օգնականի:

Մարդկային աչքը պատուհան մը չէ, որ միայն արտաքին աշխարհը կը դիտէ, այլ՝ ընդունարան մըն է որ արտաքին աշխարհը՝ նիւթական տիեզերքը և հոգեւորը խորհրդանշող աննիւթեղէնը ի՛ր մէջ կ'ընդունի, կը վերլուծէ և իր յիշողութեան ցանկին մէջ կը դասաւորէ գանոնք:

Բնական պարզ իրերը և բացայայտ դէպքերը կրնանք աչքով տեսնել, իսկ խրթին, հեռաւոր և բաղադրեալ գոյացութիւնները և գաղափարական հարցերը տեսնելու համար, կը կարօտինք անոնց ցոլացումին կամ մանրակերտ օրինակին: Օրինակի համար, ուղեղի գործունէութիւնը տեսնելու համար, համակարգիչ գննող մեքենայի (scanner)-ին կը կարօտի մեր աչքը: Ա. Էջմիածնի ամբողջական համալիրը՝ իր Մայր Տաճարով, Կաթողիկոսարանով, Ճեմարանով, գրադարանով և տեսչարանով ըմբռնելու համար, Ճարտարապետը կը պատրաստէ մանրակերտ օրինակ մը:

Ինչո՞ւ համար Աստուած՝ աչքո՛վ անտեսանելի է:

Տեսանելիք աչքը երբ անկարող է տեսնել ինքզինք..., ինչպէ՞ս կ'ակնկալէք որ նոյն աչքը կարենայ տեսնել զինք ստեղծող Արարիչը...: Անմատչելիօրէն ձեռաւորն ու անբննելի Իսկութիւնը յայտնուած է աշխարհի՞ Իր ցոլացումներովը: Յոյ՛ք մը իր յստակութիւնն ու իսկութիւնը կրնայ յայտնացուցանել մի միայն ցոլացնող հայելիին փայլով և պայծառութեամբ: Եգիպտական Բուրմերու իմացողութեան մէջ, Աստուած ցոլացած էր որպէս արեւալոյս և բարիներու ու չարերու դատաւորը: Յունական իմաստասէրներու ըմբռնումին մէջ, Աստուած ցոլացած էր որպէս գիտութիւն:

Զանազան ազգերու գիտակցութիւնը չէր կրցած հասկնալ աստուածային ցոլքը, որովհետեւ իրենց ազահութեան և հեշտամոլութեան մղումները զիրենք առաջնորդած էին փառամոլութեան և անձնապաշտութեան:

Հրեայ ազգին մարգարէները, (ո՛չ Բահանաները,) եղած են այն ներշնչեալ տեսանողները, որոնք՝ իրենց դարուն լաւագոյն և ամենայտակ տեսողութիւնը ունեցած են Արարիչ Աստուծոյ, որ ըմբռնողութեան համար

յաւէտ անիմանալի եղած կը կարծուէր: Հրեայ ազգին սրբակենցաղ մարգարէները, աղօթքով, ծովապահութեամբ և անձնագոհութեամբ, դարերու ընթացքին աւելի իրազեկ դարձան (բաղդատմամբ հեթանոսներուն) աստուածային իսկութեան և սրբութեան: Ահա թէ ի՞նչ կ'ըսեն մարգարէները.

*«Արթէ ես (Աստուած) ցուչեցու միս կ'ուտե՞մ  
կամ նոխազներու արիւն կը խմե՞մ,  
Ենտրհակալութիւն զոհէ՞ Աստուծոյ,  
Ես ուխտեղոյ կատարէ Բարձրելոյն»--Սողմոս Ծ. 13-14*  
*«Բարութիւն ընել տրվեցէ՛ք,  
Իրաւունքը փնտռեցէ՛ք, զրկուածին ուղղութիւն ըրէ՛ք,  
Որքին դատաստանը տեսէ՛ք ու ողբեարիին դատը  
պաշտպանեցէ՛ք»--Ա. 17:*

Վերոյիշեալ համարները կ'ապացուցանեն, թէ կրօնքի, պատարագներէն և աւանդական վարժութիւններէն անդին կա՛յ բարձրագոյն յայտնութիւն մը աստուածճանաչումի, որ մարդ կրնայ ըմբռնել: Մարգարէներուն շնորհուած Աստուծոյ ցուցումը կու գար աւելի մաքուր և անաչառ աստուածայտնութի՛ւն հայելիէ, որուն համար տեսանողները կանգնած էին որպէս աստուածառաք վկաներ ի գին իրենց կեանքերուն:

Դարերու սահանքին, մարդկութիւնը ի վերջոյ թեւակոխեց չափահասութիւն: Երբ դարերու նախաշրջանները՝ իրենց լրումին հասան: Աստուածային յայտնութիւնը փոխակերպուեցաւ հայելիի ցոլքէն ու դարձաւ թանձրացեալ ու շօշափելի Մարդեղեալ՝ Նազովրեցին՝ Յիսուս Բրիստոս՝ «Լոյս ի Լուսոյս»: Առաքելաւանդ մատենագրութիւնը կ'ըսէ.

*«Աստուած բազմապիսի ձեւերով և այլազան օրինակներով կանխաբանեցաւ մեր հայրերու և մարգարէներու միջոցաւ. այս օրերուս վախճանին, Ան խօսեցաւ մեզի իր Որդիին միջոցով...: Ան՝ որ լոյսն է իր փառքին և նկարագիրը իր Հոյժեան» --Եբր. Ա. 2-3:*

Աստուածայայտնութիւնը կրնայ միակողմանի նկատուիլ, սակայն ո՛չ (կողմնակալ.) Որովհետեւ ինչքան որ Աստուած՝ Ինք կը ջանայ ճանչցնել Ինքզինք աշխարհի, նոյն չափ ալ մարդ՝ ի՛նք կ'որոնէ ճանչնալ իր ստեղծիչը և Տէրը: Մարդկային դարաւոր որոնումներու արդիւնքը կրնայ սխալ արդիւնք տուած ըլլալ, սակայն հոգեկան փնտռումի շարժառիթը արդար է և պրպտումը օրինաւոր:

Մեր Տէրը Յիսուս Բրիստոս՝ գաղափարական տեսութիւն մը կամ վարկած մը չյայտնեց, այլ կենդանի ու շօշափելի ապրում մը որ աշխարհի պատմագրութեան մէջ գոյութիւն չէ ունեցած: Ան աշխարհի մատուց աննախատեսելի դարձակէտ մը փոխարկելով Իրեն թշնամի Սողոսը, Պօղոս արաբեալի, Դամասկոսի ճանապարհին: Հալածող Պօղոս տեսաւ փառապանծ

Յարուցեալը և խօսեցաւ Անոր հետ: Սոյն փորձառութեան որպէս հետեւանք, առաքեալը կը գրէ.

**«Քրիստոսի՝ որ պատկերն է աներեւոյթ Աստուծոյ»**

**--Բ. Կորնթ. Դ. 4:**

Լուսեղէն Տոլացումը՝ որուն ականատես եղած էին անցեալի մարգարէները, այժմ՝ ծնեալ էր ի Բեթղեհեմ, որպէս *«Մարմնացեալ ու Մարդացեալ»* Լուսահանդերձ Գալիլեացին: Ճառագայթող յաւերժաբոյր Մարմնացումը՝ աշակերտներու հարցազրոյցի մը ընթացքին, ըսաւ.

**«Այսքան ատեն ձեզի հետ եմ, և չճանչցա՞ր զիս, Փիլիպպոս.**

**ով որ զիս տեսաւ՝ Հա՛յրը տեսաւ. Իսկ դու ն ինչպէ՞ս կ'ըսես**

**թէ ցո՛յց տուր մեզի Հայրը»**--Յով. ԺԴ. 9-6:

**«Ես եմ Ճանապարհը և Ճշմարտութիւնը և Կեանքը»**

Ի՞նչ էր այս Մարմնացեալ ցոլացումին իւրայատուկ հանգամանքը և յատկանիշը: Ի՞նչ առանձնայատուկ նշանակութիւններով կը զանազանուի Յիսուս Քրիստոս՝ Իր նախընթաց մարգարէներէն:

Բանաստեղծներն ու մարգարէները, տաղերգած ու նախաձայնած էին խորհրդաւոր Տոլացումը: Մարգարէներ իրենց կանխատեսութեան մէջ աղօս էին անորոջ ու երբեմն ալ նախապաշարեալ: Իրենց տեսողութեան շնորհուած իսկութիւնն ու իրականութիւնը (որ միայն ցոլացում էր) կը բացատրէին *ազգայնաւոր՝* երանգաւորումով և չափազանցուած գունաւորումով:

Վերոյիջեալ տարտամ և մռայլ տեսողութեան պատճառով Միրոյ և Ողորմութեան Յայտնութիւնը՝ սխալ ճանչցուեցաւ որպէս *վրէժխնդիր* և *նախանձ ու* Աստուած հրեայ ժողովուրդին կողմէ: Մովսէս մարգարէ կը դաստիարակէ Իսրայէլի ժողովուրդը և կը նկարագրէ զԱստուած ըսելով.

**Տէր Աստուած նախանձ ու Աստուած է, որ կը հատուցանէ**

**հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչեւ**

**անոնց երրորդ ու չորրորդ ազգը»**--Ելից Ի. 5:

Իսկ Նաւումայ Մարգարէն որ ապրած է Քրիստոսէ 612 թուականին՝ կ'ըսէ.

**«Եհովա նախանձ ու վրէժխնդիր Աստուած է»**--Ա. 2:

Հեթանոս ազգերու մէջ ալ՝ Աստուած ներկայացուեցաւ որպէս վայրագ, բմահաճ և ցանկայարոյց Տէրը սիեզերքին: Հեթանոսաց աստուածը մբռնումը, Հովերոս՝ յոյն Պատմահայրը, բազմակողմանի կերպերով բացատրած է Տրովադա բաղաճին կոտորածի դէպքերու ընթացքին:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Մարմնացեալ յայտնութեան առանձնաշնորհեալ նշանակութիւնը կը պարզուի նոյն իսկ Անոր Ծննդեան ժամանակ:

Ինչպէ՞ս և ո՞ւր:

Յիսուս Մանուկ հագիւ ծնած էր մտուրիին մէջ, երկնային պահակազօրքը

տեսանելի կը դառնայ պարզունակ հովիւներուն (ո՛չ մոլեռանդ Բահանայա-  
կան դասին) և իր առաջին խօսքը կ'ըլլայ.

**«Մի՛ վախնա՛ք»ը**

*«Մի՛ վախնա՛ք, որովհետեւ անաւախկ ձեզի կ'աւետեմ մեծ ուրախութիւն մը, որ անբողջ ժողովուրդինը պիտի ըլլայ: Ու երկնային զօրքերու բազմութիւնը սկսաւ օրհնել զԱստուած ու երգեհոնել.*

***«Փա՛ռք Աստուծո՛յ բարձու նի՛ներու մէջ, և խաղաղութի՛ւն երկրի վրայ ու հաշտութի՛ւն մարդոց մէջ: (Լաւագոյն Յուն. բն. ունին... և խաղաղութիւն երկրի վրայ մարդոց մէջ զոր Ան սիրեցէ»***

**—Ղուկ. Բ. 10-14:**

Ի՛նչ հիանալի, յուսադրիչ և բարեգութ աստուածայայտնութիւն՝ ջօշափելի, տեսանելի, զգալի և լսելի: Մարմնացեալ՝ աստուածային յայտնութենէն առաջ, մարդկութիւնը ի՛նք մտայդացած էր զԱստուած Անոր ցոլացումէն: Աշխարհի երեւակայած աստուածները՝ նախանձոտ, վրէժխնդիր և խստապահանջ էին: Ոչ միայն գառներու և արջառներու արիւն կը պահանջէին, այլ նոյնիսկ մարդագոհութիւն: Մոլոխ չաստուածը՝ իր բոցակէզ ձեռքերուն մէջ անհամար և անթիւ մանուկներ և պատանիներ խորոված էր այրելով զանոնք և լոեցնելով անոնց հե՛ք ճչումը: Աստուած անունը փոխանակ սէր, գթութիւն և հաշտութիւն ներշնչելու, վախ ու սարսուռ սփռած էր մարդոց հոգիներուն մէջ:

Իրական և ճշմարիտ հոգեկա՛ն սրբութիւնը և մարմնական սրբակեցութիւնը, աշխարհ սորվեցաւ Մարդեղեալ ու Մարմնացեալ Բանն Աստուծոյի ապրումէն: Մարդկութեան շնորհուեցաւ մեղքերու թողութիւն և խղճի խաղաղութիւն, ոչ թէ նոխազներու արեան փոխարէն, այլ Հօր Աստուծոյ սիրոյ՛ն համար: Յիսուս Զրիստոս՝ աստուածառաք Միածինը՝ Ի՛նք, բոլորանրէր զոհողութեամբ, կամրջեց և հաշտեցուց մոլորածը և ապստամբը և վերադարձուց ապաշխարող մեղաւորը իր Հօրը տունը:

Աստուած այնպէ՛ս սիրեց աշխարհը, որ որկեց Իր Միածին Որդին, որպէսզի մարդկութիւնը չխարխափի ցոլացումի անորոշութեամբ, այլ կարենայ ըմբռնել Աստուծոյ սէրն ու բարեգթութիւնը և վերադառնայ իր ժառանգութեան և ազատութեան:

Զրիստոնէական Լոյս հաւատքին համար էր, որ Հայ Ազգը 301 թուականին ողջունեց Յիսուս Զրիստոսի փառապանծ ու կենդանարար հաւատքը հրածարելով անորոջ, մոայլ և երկրչիմի Զրադաշտական ցոլացումներէն:

**Յունիս 15, 1991**

**Թորոնթօ**